ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴԴԵՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ 2013թ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

հ/հ	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային բռնության քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում:	Մարզի համայնքներում կազմակերպվել են հանդիպումներ,քննարկումներ, տրամադրվել են տեղեկատվական նյութեր :	Ֆինանսավորում չի պահանջվում
2.	Հասարակության տարբեր խմբերի, այդ թվում երիտասարդների և առավել խոցելի խմբերի շրջանում գենդերային բռնության երևույթի վերաբերյալ ուսուցողական դասընթացների կազմակերպում	Հասարակության տարբեր խմբերի շրջաններում կազմակերպվել են դասընթացներ գենդերային բռնության երևույթի վերաբերյալ, դասընթացների նյութերը տպագրվել են մարզային թերթում:	ՀԿ-ներ,միջազգային կազմակերպություններ
3.	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների միջոցով աշակերտների և ծնողների շրջանում գենդերային բռնության վերաբերյալ տեղեկատվության տարածում	Մարզի դպրոցներում կազմակերպվել են բանավեճեր, սեմինարներ և բաց դասեր:	ՀԿ-ներ,միջազգային կազմակերպություններ
4.	Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16 օրյակ” հանրապետական քարոզարշավի շրջաններում միջոցառումների իրականացում:	Կազմակերպվել են քննարկումներ գենդերային բռնության թեմաներով, տեսաֆիլմերի և տեսահոլովակների դիտումներ մարզի տարբեր դպրոցներում:	ՀԿ-ներ,միջազգային կազմակերպություններ
5.	Գենդերային բռնության դեմ պայքարի հիմնախնդիրների լուսաբանման աշխատանքների իրականացում	Մշակվել և ԶԼՄ-ներում տեղադրվել են գենդերային բռնության դեմ պայքարի հիմնախնդիրների մասին տեղեկատվություն պարունակող նյութեր:	ֆինանսավորում չի պահանջվում

6.	Գենդերային բռնության ենթարկված անձանց ուղղորդման վերաբերյալ առաջարկությունների մշակում	Կազմակերպվել են քննարկումներ առողջապահության և ոստիկանության ոլորտի մասնագետների հետ գենդերային բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և ուղղորդման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:	ֆինանսավորում չի պահանջվում
7.	<<Ընդդեմ գենդերային բռնության>> Ազգային ծրագրի իրականացման լուսաբանման աշխատանքների իրականացում	Մշակվել և շրջաբերականներ են ուղարկվել մարզում կանանց ոլորտում գործող ՀԿ-ներին՝ իրենց ծրագրերին ծանոթանալու, համագործակցության եզրեր գտնելու համար:	ֆինանսավորում չի պահանջվում
8.	Գենդերային բռնության դեմ ուղղված հատուկ ակցիաների իրականացում	Իրականացվել է <<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> քարոզարշավ մարզային կառույցներում: Կազմակեպվել են հանդիպումներ մարզի տարբեր հաստատություններում /դպրոցներ, բուժ.հիմնարկներ և այլ կառույցներ/ գենդերային կարծրատիպերի հաղթահարման նպատակով:	ֆինանսավորում չի պահանջվում
9.	Գենդերային բռնության երևույթի լուսաբանման աշխատանքների իրականացում	Մարզի համայնքներում <<Կանանց իրավունքների կենտրոն>> ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպվել են շրջիկ կոնֆերանսներ՝ կենտրոնի աշխատանքների մասին իրազեկման նպատակով	ՀԿ-ներ,միջազգային կազմակերպություններ